

Բովանդակություն

| | |
|---|----|
| Ներածություն _____ | 3 |
| 1. Հաստատության գործունեությունը _____ | 4 |
| 2. Կրթական կարիքների նկարագրությունը _____ | 7 |
| 3.1. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին _____ | 11 |
| 3.2. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների(դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին _____ | 12 |
| 3. Իրավիճակի վերլուծությունը, դպրոցի ուժեղ և թույլ կողմերը _____ | 17 |
| 5. Հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ ոլորտների _____ | 43 |
| 6. Ծրագրի նպատակները և դրանից բխող խնդիրները /սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները., արդյունքների գնահատման չափանիշները. ռիսկերը. գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները./ _____ | 46 |
| 7. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները _____ | 75 |
| 8. Ծրագրի գնահատման վերահսկողությունը _____ | 82 |

Ներածություն

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում: Այն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան և պետք է ունենա նորարարական ուղղվածություն:

<<ՀՀ Լոռու մարզի Բագումի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ <<Հանրակրթության մասին>>, <<Կրթության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, << Լեզվի մասին>>, << Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքներով, ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքով>>, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

Զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908> , հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835> և ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի՝ զարգացման ծրագրի գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 399-Ա հրամանի՝ <https://escs.am/files/files/2023-04-26/9ff191eceab2fd0dd09f14fdbd406b88>. պահանջներին համապատասխան:

1. Հաստատության գործունեությունը.

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Բազում, փ.3, շ. 2

Դպրոցի էլ. փոստ՝ bazumschool@yandex.com

Վեբ կայք՝ <https://bazum.schoolsite.am/>

Հեռ.՝ (+ 374 322) 6-21-60

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ոչ առևտրային

Իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

<<ՀՀ Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Բազումի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1925թ.-ին: Սկզբում եղել է տարրական դպրոց, այնուհետև՝ յոթնամյա, իսկ 1976թ.-ին դարձել է միջնակարգ: 1988թ.-ի երկրաշարժից հետո դպրոցը գործել է տնակային պայմաններում, իսկ 2002թ.-ից՝ նոր կառուցված տիպային դպրոցում:

<<ՀՀ Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը 2003թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետքզիստրի տարածքային բաժնում (վկայական՝ 03Ա055368, գրանցված 22.01.2003թ): Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 29.09.2010թ.-ին:

Դպրոցի շենքը տիպային է, շենքի մակերեսը 700,32 քմ է, դրսի տարածքը 400,4 քմ, հարմարեցված մարզահրապարակը՝ 480 քմ, հարկայնությունը՝ 2, դպրոցին կից գործում է նախակրթարան: Ուսումնառությունը կազմակերպվում է երկհերթ, 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Դպրոցն ունի 7 դասասենյակ, որից 2-ը անվանակոչվել են դպրոցի՝ 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված աշակերտների անուններով, տնօրենի կաբինետ, ուսուցչանոց, զինկաբինետ, զինասենյակ, նիստերի դահլիճ (այժմ՝ նախակրթարան), որը միջոցառումների ժամանակ ծառայում է որպես դահլիճ, լաբորատորիա (ծառայում է նաև որպես դասարան), համակարգչային սենյակ (ուր իրականացվում են նաև Արմաթ լաբորատորիայի դասերը, այստեղ է նաև

դպրոցի հաշվապահի անկյունը), ճաշարան, խոհանոց, բուժսենյակ (նաև դասարան է), գրադարան, 2 սանհանգույց՝ նախատեսված տղաների և աղջիկների համար:

Դպրոցում 2023-2024 ուստարում սեպտեմբեր ամսվա դրությամբ սովորում է 99 աշակերտ, որից 7-ը ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, նախակրթարան է հաճախում 6 սան:

Դպրոցն ունի ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

1. Պետական գրանցման վկայական
2. Դպրոցի կանոնադրություն
3. Լիցենզիա
4. Դպրոցի զարգացման ծրագիր
5. Առարկայական ծրագրեր
6. Ներքին կարգապահական կանոններ
7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան (թղթային և էլեկտրոնային)
8. Դպրոցի շենքի սեփականության վկայական
9. Սովորողների շարժի մատյան
10. Սովորողների անձնական գործ (թղթային և էլեկտրոնային)
11. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
12. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
13. Աշխատողների հրամանագիրք
14. Աշակերտների հրամանագիրք
15. Աշխատողի անձնական գործ(թղթային և էլեկտրոնային)
16. Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդիկավորումների, ծնողական, աշակերտական, խորհուրդների արձանագրությունների մատյաններ
17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ (թղթային և էլեկտրոնային)
18. Հաստիքացուցակ (թղթային և էլեկտրոնային)
19. Տարիֆիկացիոն ցուցակ(թղթային և էլեկտրոնային)
20. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են՝ համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդափափորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատուները:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են.

- **Մանկավարժական խորհուրդ**- ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները
- **Ծնողական խորհուրդ** –ընդգրկված են դպրոցի 1-12-րդ դասարանի ծնողական խորհուրդների նախագահները
- **Աշակերտական խորհուրդ** – ընդգրկված են 6-12-րդ դասարանների երեքական սովորող
- **Երեք մեթոդական միավորումներ** – տարրական, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների, հումանիտար առարկաներ և լեզուների

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. օգոստոսի 11-ի N 341Ա/Ք հրամանի տրված լիցենզիաների՝ դպրոցն իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը.
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=37722>

- Տարրական կրթություն՝ ՍԵՐԻԱ Ա N 0553, 11 օգոստոս, 2011թ., 53 տեղ
- Հիմնական կրթություն՝ ՍԵՐԻԱ Ա N 0347, 11 օգոստոս, 2011թ., 79 տեղ
- Միջնակարգ կրթություն՝ ՍԵՐԻԱ Ա N 0283, 11 օգոստոս, 2011թ., 32 տեղ

3. Կրթական կարիքների նկարագրությունը

Ժամանակակից դպրոցից պահանջվում է ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով՝

ա) ստեղծել.

- Յուրաքանչյուր սովորողի և աշխատողի ստեղծագործական կարողությունները, նախասիրությունները բացահայտող և խթանող ,
- Անձի համակողմանի ձևավորմանը նպաստող,
- Որակյալ կրթություն ապահովող,
- Բազմակարծիք. ներառական, մասնակցային արժեքային միջավայր ապահովող,
- Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան սովորողների մոտ անհրաժեշտ կարողունակությունների ձեռքբերմանը նպաստող ,
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար բարենպաստ միջավայր ապահովող կրթական կենտրոն, որը կիմաստավորի այն բանական կապը, որ գոյություն ունի առանձին անհատի և մարդկության միջև

բ) ձևավորել

- համակողմանիորեն զարգացած
- մասնագիտորեն կողմնորոշված
- ազգային արժեքներ կրող
- մարդասիրության ոգով դաստիարակված
- հայրենասեր

- մեղիագրագետ
- իր իրավունքներն ու պարտականություններն իմացող
- օրինապահ, ազնիվ, պատասխանատվությամբ օժտված
- նախաձեռնող, հասարակական գործուն դիրքորոշում ունեցող

Կումպետենտ (կարողունակ) քաղաքացիներ:

Կրթական կարիքները ըստ ոլորտների՝ կառավարում → ուսումնադաստիարակչական աշխատանքներ → վարչատնտեսական գործունեություն

1) Կառավարման ոլորտ՝ կրթական կարիքների բացահայտում, համապատասխան գործողությունների մշակում և իրագործում

- ա) Մասնակցային, ներառական, բազմակարծիք և համագործակցային աշխատանքային մթնոլորտի ապահովում՝ դպրոց- համայնք սերտ համագործակցությամբ.
- բ) Կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավում.
- գ) Արդյունավետ ղեկավարում. (տնօրեն, փոխտնօրեն, մ/մ նախագահներ, դասղեկներ)
- դ) Ներքին կարգապահական կանոնների կատարողականի շարունակական վերահսկում՝ կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից.
- ե) SՀS-ի կիրառման շարունակական ավելացում (վերապատրաստումներ, դասընթացներ,)
- զ) Սովորողների ազատության երաշխավորում՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի (բանավեճերի կազմակերպում, կլոր սեղանների հրավիրում, քննարկումների անցկացում)
- է) Ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորությունների ընձեռում սովորողներին (ինքնակառավարման շաբաթների կազմակերպում, նախագծային հետազոտական աշխատանքների իրականացում)

ը) Սովորողների մոտ ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակության զարգացում: Սովորողներին հմտացնել նախագծային ուսուցման մեջ (արշավների, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, ապահովել կապը կյանքի հետ, երբ սովորողը կգիտակցի իր ստացած գիտելիքների պահանջվածությունը)

թ) Սովորողների իրավագիտակցության ձևավորում և զարգացում (հաճախակի կազմակերպել հանդիպումներ Ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակիցների, ԱԻՆ-ի, պարեկապահակային անձնակազմի հետ, ներկա գտնվել բաց դատավարությունների)

2) Ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ կրթական կարիքների բավարարման բուն գործընթաց

ա) Ապահովել կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները

բ) Ապահովել պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը՝ հիմք ընդունելով ՀՀ օրենքը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=171800>)

գ) Կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ որակյալ կրթություն ստանալու համար

դ) Պահպանել չափորոշային պահանջներին համապատասխան գնահատման չափանիշները՝ կրթության որակի բարձրացման համար (նոր չափորոշով պայմանավորված՝ 1-ից մինչև 5-րդ դասարանի II կիսամյակը գնահատումը կատարվելու է բնութագրական, ուստի անհրաժեշտ է, որ ուսուցիչները նկարագրման մեջ օբյեկտիվորեն արտացոլեն սովորողների գիտելիքները: Միջին դպրոցական տարիքում, քանի դեռ սովորողների մոտ չի ձևավորվել գիտակցական մոտեցում ուսման նկատմամբ, գնահատականը կարևոր դեր է կատարում: Շոայլելով գնահատականը և շեղվելով գնահատման չափանիշներից՝ էապես իջնում է սովորողների մոտիվացիան, քանզի նրանք ձգտում են << հեշտ կյանքի>> և մակերեսային գիտելիքներով ստանում են բավարար գնահատականներ: Սա բերում է ծուլության և ուսման նկատմամբ անտարբերության: Միջին դասարաններում գնահատման չափանիշների պահպանումը թույլ կտա ավագ դպրոցում առավել վստահ և գիտակցված մոտենալ ուսուցման գործընթացին և ապագա մասնագիտության ընտրությանը:)

ե) Նպաստել սովորողների մոտ մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացության, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողունակությունների ձևավորմանը:

զ) Սովորողի կրթական կարիքի գնահատում ,կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ

է) Ձևավորել քննադատական, ստեղծագործական մտածողություն

Տես նաև՝ կառավարման ոլորտ, կետ զ) է) ը) թ)

զ) Վարչատնտեսական գործունեություն՝ նպաստավոր միջավայրի ապահովում

- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում
- Գնումների գործընթացի կազմակերպում
- Դպրոցի ուսումնառության անձնակազմի աշխատանքների արդյունավետ կազմակերպում և վերահսկում
- Դպրոցի ծախսերի վերահսկում

Կրթական կարիքները սահմանելով՝ հստակ կարող ենք ձևակերպել դպրոցի առաքելությունը.

Դպրոցի առաքելությունը՝ 21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) քաղաքացու ձևավորումն է՝ զինված գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրենասեր :

Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները, սահմանի կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

3.1. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցը, համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին , իր գործունեությունը իրականացնում է .

- Սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին համապատասխան(դասաընթացների ընթացքում, ելնելով սովորողների առանձնահատկություններից, շերտավորված աշխատանքների կազմակերպում):
- Ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ (կլոր սեղանի հրավիրում, քննարկումների, դասախոսությունների, բաց դասերի, զրույցի բանավեճի կազմակերպում ,ինքնակառավարման շաբաթի կազմակերպում, ԱԽ-ի իրավական և սոցիալական հանձնախմբերը կազմակերպում են քննարկումներ, զրույցներ՝ ուղղված աշակերտների իրավունքների և պարտականությունների ճանաչմանը):
- Հայրենասիրական դաստիարակությամբ (միջոցառումներ՝ նվիրված Անկախության օրվան, Բանակի օրվան, հիշատակի օրերին նվիրված բաց դասեր, միջոցառումներ, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, Բազում համայնքում գտնվող ԴՈՅ-ի գորամասում կրակային պատրաստություն ,գորամասից հյուրերի ընդունում, նրանց կողմից զրույցներ սովորողների հետ՝ ռազմահայրենասիրական թեմաներով,մասնակցություն համապետական շաբաթօրյակներին, ծառատունկին):
- ԿԱՊԿՈԻ սովորողների ինտեգրմամբ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներգրավվածություն դասաընթացին, ներդպրոցական , արտադպրոցական աշխատանքներին, ռեսուրս-անկյունում այդ սովորողների հետ բազմամասնագիտական թիմի կողմից տարվող աշխատանքներ):
- Համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան (իրականացվել է նախագծային աշխատանք՝ <<Կլիմայի փոփոխությունը>> թեմայով, դպրոցի բակում սովորողները պատրաստել են <<Կոմպոստ – օրգանական պարարտանյութ>>, պատրաստել են իրազեկման բուկլետներ և բաժանել են համազյուղացիներին, տարբեր դասարանների սովորողներ այցելել են համայնքում գտնվող <<Van Food>> պահածոների գործարան, ցուրտ եղանակներին տարրական դասարանների աշակերտները ֆիզկուլտուրայի դասերը անցկացնում են համայնքում գործող << Յուրահատուկ սենյակում>>, որը հազեցած է մարզական գույքով):

- Շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան (Դպրոցի աշխատողների մոտ 40% ը Բազում գյուղի բնակիչներ են, դպրոց են հաճախում Բազում գյուղի խնամատար ընտանիքներում ապրող երկու սովորող):

- Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատմամբ՝ գործունեության վերլուծությամբ (տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը, դպրոցի վարչական, մանկավարժական աշխատողների , սովորողների և նրանց ծնողների կողմից):

3.2. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների(դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Դպրոցի ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

| Շենքային պայմանները | քանակը | Մակերեսը (քմ) | Ներկա վիճակը |
|--|--------|---------------------|--|
| Երկհարկանի տիպային շենք | 1 | 700.32 | բավարար |
| Նիստերի դահլիճ, այժմ նախակրթարան | 1 | 64,96 | լավ |
| Դասարաններ | 7 | յուրաքանչյուրը 31,4 | 2-ը վերանորոգված՝ լավ, 5-ը՝ բավարար |
| Տնօրենի կաբինետ | 1 | 21,00 | բավարար |
| Ուսուցչանոց | 1 | 47,00 | լավ |
| Զինկաբինետ | 1 | 15,7 | լավ |
| Լաբորատորիա՝ ընդհանուր բնագիտական առարկաների | 1 | 31,4 | վերանորոգված՝ լավ , անհրաժեշտ ռեսուրսները՝ բավարար |
| Ճաշարան | 1 | 31,4 | լավ |
| Խոհանոց | 1 | 31,4 | լավ |
| Սննդի պահեստ | 2 | 5,0 | բավարար |



| | | | |
|---|---|-----------------------|---------|
| Բուժկետ, որը ծառայում է որպես դասասենյակ | 1 | 15,70 | բավարար |
| գրադարան | 1 | 21,00 | բավարար |
| Համակարգչային կաբինետ, որտեղ հարմարեցրած է <<Արմաթ>> լաբորատորիան և հաշվապահի անկյունը: | 1 | 31,4 | բավարար |
| Սանհանգույց | 2 | յուրաքանչյուրը՝ 15,70 | բավարար |
| Թեքահարթակ՝ մուտքի մոտ | 1 | | լավ |
| Առարկայական կաբինետ | - | - | - |
| Արհեստանոց | - | - | - |
| | | | |

| Գույք, սարքավորումներ | Քանակ | Ներկա վիճակը |
|-------------------------------|-------|----------------------------|
| համակարգիչ | 5 | 3-ը՝ լավ, 2-ը՝ չի աշխատում |
| նոթբուք | 1 | լավ |
| պլանշետ | 6 | լավ |
| բազմաֆունկցիոնալ տպիչ սարք | 1 | լավ |
| տպիչ սարք | 2 | լավ |
| թվային պրոյեկտոր | 1 | բավարար |
| հոսանքի անխափան սնուցման սարք | 2 | լավ |
| սառնարան | 1 | լավ |
| սալօջախ | 1 | լավ |
| կոնվեկցիոն ջեռոց | 1 | լավ |
| ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| կենցաղային կշեռք | 1 | լավ |
| լվացարան | 1 | լավ |

| | | |
|--|------|---------|
| դարակաշար | 1 | լավ |
| Խոհանոցի աշխատանքային սեղան | 1 | լավ |
| դաշնամուր | 1 | բավարար |
| չիրկիզվող պահարան | 1 | բավարար |
| Նախակրթարանի գրքերի պահարան | 3 | լավ |
| խաղայիքների պահարան | 2 | լավ |
| Նախակրթարանի հագուստի պահարան | 5 | լավ |
| գորգ | 1 | բավարար |
| գրապահարան | 2 | լավ |
| Գեղարվեստական գրքեր | 6325 | բավարար |
| Աշակերտական սեղան | 54 | բավարար |
| Աշակերտական աթոռ | 154 | բավարար |
| Մանկական սեղան | 4 | լավ |
| Մանկական աթոռ | 24 | լավ |
| Շախմատի սեղան | 5 | լավ |
| Ուսուցչի սեղան | 5 | լավ |
| Դրոշ | 1 | լավ |
| գրատախտակ | 16 | բավարար |
| Զեռուցման համակարգ | | լավ |
| կառնեզ | 45 | բավարար |
| Արմաթ լաբորատորիայի գույք, սարքավորումներ | | լավ |
| | | |

Դպրոցի մարդկային ռեսուրսները

| Մարդկային ռեսուրսներ | քանակ |
|--|--|
| Անձնակազմ, որից՝ | 38 |
| վարչական | 4 |
| ուսուցիչներ | 20, որից 19՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և համապատասխան որակավորում ունեցող, 1 ուսուցիչ՝ միջնակարգ կրթություն ունեցող, որը այս տարի պատրաստվում է մասնակցել կամավոր ատեստավորմանը |
| Մանկավարժական աշխատողներ, որից՝ | 4 |
| Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող | 1 |
| Հոգեբան | 1 |
| Ուսուցչի օգնական | 1 |
| Զինղեկ | 1 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ, որից՝ | 9 |
| Գլխավոր հաշվապահ | 1 |
| Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ | 1 |
| Լաբորանտ | 1 |
| Պահակ | 4 |
| Հավաքարար | 2 |
| Նախակրթարանի դաստիարակ | 1 |
| Աշակերտներ | 99 |



4.Իրավիճակի վերլուծությունը, դպրոցի ուժեղ և թույլ կողմերը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|--|---|
| Շենքային պայմաններ | |
| <ul style="list-style-type: none"> • Ամուր, տիպային շենք https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989 • Լոկալ ջեռուցման համակարգի առկայություն, դասարաններում, միջանցքներում պահանջվող ջերմաստիճանի ապահովման հնարավորություն • Մշտական ջրով ապահովվածություն • Դպրոցը տեղակայված է անվտանգ վայրում, ցանկապատված է • Դպրոցի պատուհանները և դռները վերջին 5 տարվա ընթացքում փոխարինվել են եվրոպատուհաններով և եվրոդռներով • Արմաթ լաբորատորիայի առկայություն • Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր • Դպրոցում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան, որնք փակցված են դպրոցի միջանցքներում , բոլոր հարկերում | <ul style="list-style-type: none"> • Դպրոցը կարիք ունի երկրորդ մասնաշենքի կամ նոր շենքի , քանի որ` • դասասենյակների պակասի հետևանքով դասերը կազմակերպվում են երկու հերթով, դասերն ավարտվում են երեկոյան ժամը 18⁵⁵ -ին (ձմռանը նշված ժամին մութ է լինում), որի պատճառով էլ շատ երեխաներ, մեծ ցանկության դեպքում անգամ, չեն կարողանում հաճախել արտադպրոցական խմբակների • Դպրոցն իր կառուցման պահից չի ունեցել մարզադահլիճ • Դպրոցի ետնամասը ծառայում է որպես հարմարեցված մարզահրապարակ • Դպրոցի դասարանները ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք • Դպրոցի լաբորատորիան ծառայում է նաև որպես դասարան • Համակարգչային կաբինետը ծառայում է նաև որպես <<Արմաթ>> լաբորատորիա, նաև հաշվապահի անկյունն է այստեղ, իսկ սովորողների անընդհատ շարժը |

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Երկու դասարաններ վերանորոգվել են դպրոցի և ծնողական ներդրումների միջոցներով և անվանակոչվել են 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի աշակերտների անուններով | <p>խանգարում է հաշվապահի աշխատանքին</p> <ul style="list-style-type: none"> • Նախակրթարանը միջոցառումների ժամանակ ծառայում է որպես դահլիճ • Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների բացակայություն, ադ թվում հարմարեցված սանհանգույց, երկրորդ հարկ տանող թեքահարթակ, ռեսուրս-սենյակ և այլն (դպրոցում սովորում է ԿԱՊԿՈՒ 7 երեխա) • Առարկայական դասարանների բացակայություն |
|---|---|

Նյութատեխնիկական բազան

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Փոքր, բայց հարուստ գրադարանի առկայություն՝ 6325 գիրք, սովորողների կողմից մեծ հատաքրքրվածություն մեթոդական, գեղարվեստական գրքերի նկատմամբ • Արմաթ լաբորատորիայի առկայություն՝ համապատասխան տեխնիկայով և կահույքով, որտեղ հաճախում է տարբեր դասարաններից 15-ից ավել երեխաներ • Դպրոցում առկա է 3 համակարգիչ (աշխատանքային՝ տնօրենի, հաշվապահի և օպերատորի), 1 նոթբուք, 5 պլանշետ, 1 պրոյեկտոր, 1 բազմաֆունկցիոնալ, 2 սովորական տպիչ սարք • Դպրոցում առկա է բնագիտական առարկաների ընդհանուր լաբորատորիա | <p>Դպրոցի գրադարանն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի շենքային պայմանների փոքր լինելը թույլ չեն տալիս ռեսուրս- սենյակ ունենալու, ուստի գրադարանի մի փոքրիկ անկյունը հարմարեցված է որպես ռեսուրս-անկյուն • Ռեսուրս-անկյան ոչ լիարժեք կահավորում, դիդակտիկ պարագաների անբավարարություն • Դասարանների գույքը (սեղան, նստարան, գրատախտակ) հին է • Համակարգչային կաբինետի համակարգիչները հին են և անսարք, դասերի ժամանակ որպես S2S միջոց |
|--|--|

| | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցում առկա է վերանորոգված և կահավորված խոհանոց, որտեղ առկա է գազօջախ, սառնարան, ջրատաքացուցիչ, լվացարան, չժանգոտվող մետաղյա դարակաշարեր • Դպրոցում առկա է վերանորոգված ճաշարան, որտեղ <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրով տաք սնունդ են ստանում նախակրթարանի և տարրական դասարանի 33 սովորող | <p>ուսուցիչները օգտագործում են հեռախոսները, ինչը ոչ արդյունավետ է:</p> <p>Դպրոցը կորոնավիրուսային համաճարակի ժամանակ որպես գույք ստացել է 1 նոթբուք և 5 պլանշետ, որոք օգտագործվում են դասերի ժամանակ: Կարիք կա նոր համակարգիչների, համակարգչային սարքավորումների (ինտերակտիվ գրատախտակ)</p> <ul style="list-style-type: none"> • Նախակրթարանի ռեսուրսների անհագեցվածություն • Առարկայական դասասենյակների, լաբորատոր անհրաժեշտ գույքի բացակայություն, լաբորատոր նյութերի բավականին քիչ քանակ • Մարզագույքի անբավարարություն • Ուսումնական պաստառների անբավարարություն • Գրադարանում ժամանակակից գրականության պակաս • Դպրոցի ճաշարանի սեղան- աթոռները հին են , կարիք կա 5 նոր սեղանի և 25-ի նոր աթոռների, որպեսզի երկու հերթափոխով երեխաները սնվեն |
|---|--|

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none">• Դպրոցի կառավարման մարմիններն են• <i>Հիմնադիրը</i>• <i>ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը</i>• <i>Կառավարման խորհուրդը (միացյալ՝ Բազումի միջնակարգ դպրոց, Ազնվածորի միջնակարգ դպրոց, Բազումի հիմնական դպրոց) բաղկացած 19 անդամից</i>• Կառավարման խորհուրդը իրականացնում է դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգի վերապահված գործառույթների՝<ul style="list-style-type: none">ա/ դպրոցների հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի վերաբերյալ քննարկումներ անցկացնելը և հավանություն տալը,բ/ քննարկում և հաստատում է տարեկան եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը՝ հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկություններըգ/ տարեկան առնվազն երկու անգամ՝ կիսամյակների ավարտին, լսում, քննարկում և հավանության է արժանացնում տնօրենի զեկույցը՝ կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների մասինդ/ քննարկում և հաստատում է ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգըե/ հաստատում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները• Կառավարման խորհրդի նախագահը և անդամները մասնակցել են 2022թ.-ին ԿԶՆԱԿ-ի կողմից | <ul style="list-style-type: none">• Կառավարման խորհրդի գործունեության պասիվություն, նախաձեռնողականության պակաս• Կառավարման խորհրդի նիստերին , զբաղվածությունից ելնելով, լինում են բացակայություններ• Դպրոցի կառավարման գործում ծնողների ներգրավվածության, ակտիվության ցածր մակարդակ• Կառավարման խորհրդի ոչ բոլոր անդամներն են ակտիվորեն ներգրավված խորհրդի աշխատանքներին• Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:• Դպրոցի աշակերտական խորհրդի ինքնուրույն նախաձեռնությունների պակաս• Դպրոցի մեթոդիավորումները չեն համագործակցում այլ դպրոցների մեթոդիավորումների հետ |
|--|---|

կազմակերպած վերապատրաստմանը

- Կառավարման խորհրդի նիստերը հրավիրվում են սահմանված ժամկետում և օրակարգով, հրավիրվում են նաև արտահերթ նիստեր՝ ելնելով անհրաժեշտությունից
- Կառավարման խորհրդի անդամների և տնօրենների միջև ստեղծված է մասնակցային, հարգալից աշխատանքային միջավայր

• Գործադիր մարմինը (տնօրենը, այսուհետ նաև համակարգողը)

Դպրոցում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են հետևյալ խորհրդակցական մարմինները՝

• Մանկավարժական խորհուրդ

Կազմված է համապատասխան որակավորում ունեցող 27 մանկավարժներից, անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են ծնողխորհրդի և աշխորհրդի նախագահները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով

• Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 12 անդամից

ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանք՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում

• Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած – 21 անդամից

Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն

• Առարկայական 3 մեթոդական միավորումներ

1. Մաթեմատիկայի և բնական առարկաների մ/մ
- 2 Հումանիտար առարկաների և լեզուների մ/մ
- 3 Տարրական կրթության մ/մ

• Առարկայական մ/մ-երը սահմանված կարգի համաձայն հրավիրում են նիստեր, քննարկում ուսումնադաստիարակչական տարբեր հարցեր, անում առաջարկություններ :

• Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը

• Խորհուրդները գործում են անկախ, կանոնավոր գումարում են իրենց նիստերը՝ նպաստելով դպրոցի ուսումնադաստիարակչական և կառավարման գործընթացին, անդրադառնում են ընթացիկ հարցերի և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար

Հաստատության համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող

• Դպրոցի ֆինանսական սղության պատճառով երբեմն առաջանում են դժվարություններ խնդիրները

հանձնարարականների կատարումը:

- Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին (տոնական միջոցառումներ, հիշատակի, եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ, շաբաթօրյակներ, փառատոններ, գյուղի տոն)

. Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ Գիտելիքի օր , Վերջին զանգ, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին

- Դպրոցը մասնակցում է համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:

. Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը: Դպրոցի աշակերտները փայլուն իրականացրեցին <<ԱՅԲ>> կրթական հիմնադրամի և Յունիսեֆի կողմից կազմակերպած <<Կլիմայի փոփոխությունը>> թեմայով նախագծային աշխատանքը, որտեղ ևս ապահովված էր համայնք-դպրոց կապը:

<https://www.facebook.com/100002535840435/videos/5937811826342175/>

Համայնքապետարանը օժանդակել է նախագծային աշխատանքի լիարժեք իրականացմանը՝ համայնքի ֆինանսական միջոցներով տպելով 100-ից ավելի բուկլետներ՝ << Կոմպոստ-օրգանական պարարտանյութ>>

իրագործելու:

- Մարզադահլիճի բացակայության պատճառով ցուրտ եղանակին տարրական դասարանի երեխաները ֆիզկուլտուրա առարկան անցկացնում են

<< Յուրահատուկ սենյակում>>, որը մոտ է դպրոցին

. Ծնողական համայնքի ներգրավվածությունը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին ակտիվ չէ:

թեմայով, որը բաժանվել է գյուղի ընտանիքներին՝ որպես իրազեկում:

<https://www.facebook.com/photo.php?fbid=6192491800845913&set=pb.100002554632983.-2207520000.&type=3>

- Դպրոցը ակտիվորեն մասնակցել է Փամբակ համայնքի Բազում բնակավայրում կայացած **Փամբակresourceֆեստ** փառատոնին

<https://www.facebook.com/hashtag/%D6%83%D5%A1%D5%B4%D5%A2%D5%A1%D5%AFresource%D6%86%D5%A5%D5%BD%D5%BF%D5%A8> : Փառատոնին ներկա էին ԱՄՆ

դեսպանատան ռազմական համագործակցության պատասխանատու Մայքլ Հայեսին, դեսպանատան ռազմական համագործակցության գրասենյակի ծրագրերի համակարգող Անի Մելքունյանը, Կանգապի ազգային գվարդիայի նվազախումբը, Փամբակ խոշորացված համայնքի 15 գյուղեր՝ իրենց մշակույթով, արտադրանքով: Բազում համայնքից ներկայացվել էր վերոնշյալ << Կոմպոստը>>՝ որպես օրգանական պարարտանյութ, դպրոցի սովորողների և աշխատակիցների ձեռքի աշխատանքներ, որոնք հանվեցին ցուցահանդես-վաճառքի

- Դպրոցն իր ակտիվ մասնակցությունն է ունենում օգոստոսի 31-ին՝ << Գյուղի օվան>> նվիրված միջոցառմանը

- Դպրոցը մասնագիտական կողմնորոշման և տարբեր առարկաներից (ֆիզիկա, քիմիա, հասարակագիտություն, աշխարհագրություն) հմտություններ ձեռք բերելու համար

կազմակերպում է այցելություն գյուղում գտնվող <<VanFood >>պահածոների գործարան

- Դպրոցում ամուր է հոգևոր դաստիարակությունը: Սովորողները մասնակցում են գյուղում կառուցված << Ս. Մախամ Աստվածածին >> (12-13-րդ դդ) եկեղեցում տեղի ունեցող արարողություններին (պատարագ, գյուղի բակում Տեառնընդառաջի արարողություն և այլն):

- Դպրոցի անձնակազմն ու սովորողները մշտապես հոգում են Արցախյան առաջին պատերազմի՝ դպրոցի զոհված աշակերտների համար դպրոցի բակում տեղադրված խաչքարի, 2022թ. գյուղամեջում կառուցված Արցախյան պատերազմների զոհված աշակերտների համար կառուցված հուշահամալիրի մաքրությունը: <https://www.facebook.com/photo.php?fbid=6150838721677888&set=pb.100002554632983.-2207520000.&type=3>

- Պարբերաբար հրավիրվում են դպրոցի սովորողների ծնող-մասնագետներ, կազմակերպվում են զրույցներ՝ սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու համար

- Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ՝

ԿԶՆԱԿ- դպրոցը և առանձին ուսուցիչներ ընդգրկված են ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր սեմինարներում, ծրագրերում

ՀՄԿ -13 ուսուցիչներ ավարտել են մենթոր ուսուցչի

կողմից իրականացվող վերապատրաստումը, ուսուցչի օգնականի, սոցմանկավարժի մասնագիտական վերապատրաստումներ

ԳԹԿ – դպրոցում իրականացնում են արտաքին գնահատում , կազմակերպում են ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունները

ԿՏԱԿ – Իթվինինգ, <<Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ>>, խորհրդատվության տրամադրում emis.am-ի հետ կապված

ՏՄԱԿ – ԿԱՊԿՈւ երեխաների հետ աշխատանք

<<Ինտերակտիվ կրթության զարգացում>> հիմնադրամ-

<< MOODLE>> համակարգը, որպես հեռավար ուսուցման համապիտանի հարթակ>>, ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

<< Մասնակցային դպրոց>> հիմնադրամ- իրականացնում է ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

. Ծնողական համայնքը մշտապես իրազեկ է և հնարավորինս ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում

- Դպրոցը համագործակցում է Դեբեդի COAF SMART կենտրոնի հետ, 6-12-րդ դասարանի 20-ից ավելի աշակերտներ ընդգրկված են COAF-ի առաջարկած տարբեր ծրագրերում:

- Դպրոցը համագործակցում է Էյ-Թի-Փի Էկոակումբի հետ,

դպրոցի բակում ստեղծվել է փոքրիկ պուրակ, որտեղ տնկվել են էկոսկոլումբի կողմից տրված թփերի տեսականին:

Այց **Մարգահովտի** **ATP** **էկոսկոլումբ**
<https://www.facebook.com/bazumschool.bazumschool?mibextid=LQOJ4d>

- Դպրոցը համագործակցում է ԱԻՆ-ի հետ (զրույցներ, տազնապ, տարհանմուն կազմակերպում)
<https://www.facebook.com/photo?fbid=6206328932795533&set=pb.100002554632983.-2207520000>.

- Դպրոցը համագործակցում է Ոստիկանության Գուգարքի բաժնի հետ (զրույց, դասախոսություն)
<https://bazum.schoolsite.am/%d5%b4%d5%a5%d6%80-%d5%a1%d5%bc%d6%85%d6%80%d5%b5%d5%a1%d5%b6/%d5%a9%d5%a5%d5%b4%d5%a1%d5%bf%d5%ab%d5%af-%d5%a6%d6%80%d5%b8%d6%82%d5%b5%d6%81-%d5%a1%d5%b6%d5%b9%d5%a1%d6%83%d5%a1%d5%b0%d5%a1%d5%bd%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b7%d6%80%d5%bb%d5%a1%d5%b6%d5%b8/>

- Դպրոցը համագործակցում է համայնքում կառուցված <<Յուրահատուկ սենյակի>> հետ, որը հազեցած է մարզական գույքով

- Դպրոցը համագործակցում է Վանաձորի կերպարվեստի թանգարանի հետ (կազմակերպվում են այցություններ թանգարան, դպրոցը մասնակցել է << Քո արվեստը դպրոցում>> նախագծին)
<https://www.facebook.com/photo.php?fbid=6019719604789801>

<https://www.facebook.com/photo.php?fbid=6125296817565412&set=pb.100002554632983.-2207520000.&type=3>

• Վանաձորի օդերևութաբանական կենտրոնի (կազմակերպվել են ուսուցողական դասեր հենց Վանաձորի օդերևութաբանական կենտրոնում <https://www.facebook.com/photo.php?fbid=6125296817565412&set=pb.100002554632983.-2207520000.&type=3>

• Բյուրականի աստղադիտարանի հետ, կազմակերպվում են ուսումնական դասեր, դասախոսություններ, զրույցներ <https://www.facebook.com/photo.php?fbid=6094509293977498&set=pb.100002554632983.-2207520000.&type=3>

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

• Դպրոցի զարգացման ծրագրի տեսլականից բխող

• Կամավոր ատեստավորմանը մասնակցելու

| | |
|--|---|
| <p>ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում և կազմակերպում</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցում դասավանդում են բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող (բացի 1 ուսուցչից, ով ունի միջնակարգ կրթություն և պատրաստվում է մասնակցել կամավոր ատեստավորմանը) և ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ • Դպրոցում դասավանդում են մեծամասամբ ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ • Մի քանի ուսուցիչների գիտական կամ մեթոդական հոդվածներ են տպագրվել հանրապետական պարբերականներում՝ <p>ա/ 3 ուսուցչի հոդված «ՎՊՀ, Գիտական տեղեկատու»», https://www.vsu.am/banber/PRAK-A-2016.pdf, էջ 285,</p> <p>https://www.vsu.am/banber/kaykum-BOOK-A-prak-2017.pdf, էջ 14 և 362</p> <p>բ/ 1 ուսուցչի մեթոդական հոդվածը տպագրվել է միջազգային պարբերականում՝, Международная научная конференция,, ՀՀ ԿԳՆ https://www.vsu.am/banber/V-mejd-2018..pdf , էջ 141</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցում ունենք 1 մենթոր ուսուցիչ՝ «ԱՅԲ» կրթական հիմնադրամի և Յունիսեֆի կողմից իրականացրած «Կլիմայի փոփոխություն. Ինչպես պլանավորել և իրականացնել ուսումնական նախագծային աշխատանք» | <p>պասիվություն</p> <ul style="list-style-type: none"> • ՏՀՏ-ի ոչ լիարժեք տիրապետում • Վերապատրաստող ուսուցիչների բացակայություն • Մենթոր ուսուցչի պակաս (ընդհամենը՝ 1 ուսուցիչ) • Սովորողների ուսումնառության գնահատման գործընթացում դեռևս հանդիպում են որոշ անհամապատասխանություններ (տես էջ 9-10, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, կես դ) |
|--|---|

խորագրով ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրում վերապատրաստող մենթոր

- դպրոցի ուսուցիչները օգտվում են armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram կրթական ռեսուրսներից

- Դպրոցի ուսուցիչները վերապատրաստումներ են անցնում ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում

- Դպրոցում իրականացվում է աշակերտակենտրոն ուսուցում

- Բնագիտական առարկաների ուսուցիչներ ընդգրկված են որոշ կրթական ծրագրերում՝ Կլիմայական արկղիկ, Գիտսերունդ, ԱՅԲ-ի կրթական ծրագրեր

- Մանկավարժների աշխատանքը կազմակերպվում է թիմային և մասնակցային ձևով

- Մանկավարժները ընդգրկված են ԿԶՆԱԿ-ի, ԿԳՄՍՆ-ի , ՀՄԿ-ի կողմից անցկացվող տարբեր ծրագրերում, սեմինարներում, վերապատրաստումներում <https://bazum.schoolsite.am/%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81>

- Թվով **13** ուսուցիչ այս տարի մասնակցել է ՀՄԿ-ի կողմից իրականացվող <<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագրի 140-ժամյա վերապատրաստման դասընթացին և ստացել է

| | |
|--|--|
| <p>մենթորական աջակցություն</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և առարկայի ուսուցիչները այս տարի մասնակցել են 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում նոր չափորոշի ներդրմամբ պայմանավորված վերապատրաստումներին՝ առկա և հեռավար (Teams հարթակում) • Դպրոցի 5 ուսուցիչ ստանում է որակավորման առաջին աստիճանի տարակարգ <ul style="list-style-type: none"> • Դպրոցում պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրինության, մ/մ նախագահների կողմից, փոխադարձ դասալսումներ ուսուցիչների կողմից, կատարվում են քննարկումներ, վերլուծություններ | |
|--|--|

Օգտագործվող S2S և կրթական այլ տեխնոլոգիաների նորարարությունների ներկայացում

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով • Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա, որտեղ հաճախում են տարբեր դասարաններից 15-ից ավելի սովորողներ • Դպրոցում մատենավարությունը կատարվում է էլեկտրոնային տարբերակով • Դպրոցն օգտվում է էլեկտրոնային տարբեր կրթական հարթակներից՝ Microsoft TEAMS, Google Classroom և այլն | <ul style="list-style-type: none"> • SMART դասասենյակի բացակայություն • Համակարգիչների և համակարգչային այլ տեխնիկայի պակաս • Ինտերակտիվ գրատախտակի բացակայություն • Դպրոցի ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում S2S գործիքների՝ https://kahoot.com/, https://ru.padlet.com/, https://quizizz.com/admin/quiz/5a, https://learningapps.org/ |
|---|---|

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցն օգտվում է հեռավար ուսուցման նպատակով հավաքված ռեսուրսներից և տեսադասերից՝ lib.armedu.am, e-school.am, heravar.armedu.am և այլն • Դպրոցի ուսուցիչներից շատերը մասնակցել են ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» վերապատրաստմանը • Դպրոցի կողմից Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram: • Դպրոցի հաջողությունները, ձեռքբերումները լուսաբանվում են դպրոցի պաշտոնական և ֆեսբուքյան էջերում | <ul style="list-style-type: none"> • Որոշ ուսուցիչներ և սովորողներ հաճախ բախվում են նոր տեխնոլոգիաներին հարմարվելու դժվարություններին, որոնք պահանջում են լրացուցիչ աջակցություններ, վերապատրաստումներ • Ֆինանսական սղության պատճառով դպրոցը չի կարողանում ձեռք բերել տեխնոլոգիական նոր ռեսուրսներ՝ դասերի ավելի արդյունավետ կազմակերպման համար |
|--|---|

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>


| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Չափորոշչային պահանջներին համապատասխան հավասարապես հասանելի, մասնակցային, ներառական և | <ul style="list-style-type: none"> • Նոր չափորոշչին անցմամբ պայմանավորված որոշակի դժվարություններ |
|--|--|



| | |
|---|--|
| <p>որակյալ կրթության քաղաքականության ապահովում</p> <ul style="list-style-type: none"> • Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում՝ տարրական, հիմնական, միջնակարգ աստիճաններում • Կարողունակությունների վրա հիմնված կրթության կազմակերպում • Հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչների՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք, ապահովմամբ կրթության կազմակերպում • Ըստ հանրակրթության նոր չափորոշի՝ իրականացվում է միավորային և ոչ միավորային (2-րդ դասարան) գնահատում • Ուսուցիչները, մասնագիտական և մեթոդական պատրաստվածության բարձրացման նպատակով, մասնակցում են տարբեր վերապատրաստումների, զբաղվում ինքնակրթությամբ • Դպրոցը կարևորում է դասավանդման գործնական ուղղվածության բարձրացումը, երբ սովորողները կապ են տեսնում ուսուցման և կյանքի հետ, գիտակցում են ստացված գիտելիքների պահանջվածությունը • Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան • Դասերի պլանավորում (5 քայլով օրվա դասի պլանների կազմում) | <ul style="list-style-type: none"> • Այլ դպրոցների հետ համատեղ մեթոդափոխումների բացակայություն • ԿԱՊԿՈւ սովորողների կրթության համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն • Որոշ սովորողների շրջանում ինքնարտահայտման, համարձակության պակաս • Որոշ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրվածության պակաս, հատկապես միջին և ավագ դասարաններում |
|---|--|

- Գնահատման չափանիշների խստիվ պահպանում՝ պայմանավորված կրթության որակի բարելավմամբ
- Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ տնօրինության, մ/մ -երի կողմից
- Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը
- Աշակերտների մոտիվացիան կրթության նկատմամբ տարեցտարի բարձրանում է : 2023թ-ին ՀՀ տարբեր ԲՈՒՀ-եր են դիմել 13 շրջանավարտից 10-ը, որից 9-ը ընդունվել են ՀՀ տարբեր ԲՈՒՀ-եր
 1. ԵՊԲՀ-1 սովորող անվճար հիմունքներով,
 2. ԵՊՀ- 1 սովորող վճարովի հիմունքներով
 3. ՎՊՀ -5 սովորող, որից 1-ը անվճար հիմունքներով, 4-ը՝ վճարովի
 4. ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ -2 սովորող, որից 1-ը՝ անվճար հիմունքներով, 1-ը՝ վճարովի
 5. 2 սովորող՝ միջին մասնագիտական հաստատություններ
- Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների (կազմակերպած՝ ԿԳՄՍՆ-ի, ԵՊՀ-ի, ՎՊՀ-ի) ,ստեղծագործական (ասմունք, պար) և սպորտային մրցույթների (կարետե, շախմատ,) և ունենում են հաջողություններ Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս : Այդ ամենը լուսաբանվում է դպրոցի պաշտոնական կայքէջում <https://bazum.schoolsite.am/>, դպրոցի ֆեյսբուքյան էջում <https://www.facebook.com/bazumschool.bazumschool?mibextid=LQOJ4d>

• 2022-23ուստարում ունենք հաջողություններ
 առարկայական օլիմպիադաներից, մասնավորապես՝
 <<Քիմիա>>- հանրապետական փուլի մասնակից 1
 աշակերտ
 <<Կենսաբանություն>>- հանրապետական փուլի 2
 մասնակից
 <<Պատմություն>>- մարզային փուլի 1 մասնակից
 ԵՊՀ օլիմպիադա, <<Հայոց պատմություն>>- II կարգի
 դիպլոմ

ԲՈԼՅ - եր ընդունված շրջանավարտների թիվը





Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովում

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցում ստեղծված է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր՝ մի շարք կոմպետենցիաների ապահովմամբ՝ <ul style="list-style-type: none"> • ազատ խոսքի կոմպետենցիա • քննադատական դատողության կոմպետենցիա • համատեղ գործողությունների, նպատակների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման և որոշումների ընդունման կոմպետենցիա • Դպրոցում ապահովված է նախաձեռնողականության, բազմակարծության մթնոլորտը՝ սովորողների կողմից կլոր սեղանների հրավիրում, բանավեճերի կազմակերպում, տարաբնույթ հարցերի քննարկում • Դպրոցում ապահովված է համագործակցային հարաբերությունների մթնոլորտը, թիմային աշխատանքը՝ թե՛ մանկավարժական աշխատողների, թե՛ սովորողների շրջանում • Դպրոցում աշխատում է բազմամասնագիտական թիմ՝ հոգեբան, ուսուցչի օգնական՝ համագործակցելով ՏՄԱԿ-ի հետ • Դպրոցն ապահովում է մասնագիտական աճի հնարավորություն ուսուցիչների համար՝ տարբեր կրթական ծրագրերի, վերապատրաստումների, սեմինարների մասնակցություն • Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, ունենք ԿԱՊԿՈՒ՝ 7 սովորող | <ul style="list-style-type: none"> • Սովորողների շրջանում ազատ խոսելու, կարծիքն արտահայտելու պասիվություն • Ֆիզիկական միջավայրի անհարմարություն • ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության համար խելամիտ հարմարեցումների պակաս՝ ռեսուրս-սենյակ և այլն • ազատ դասարաններ չլինելը խոչընդոտում է հաճախակի բանավեճերի կազմակերպելը, կլոր սեղանների հրավիրելը, քննարկումներ անելը |
|--|--|

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոց են հաճախում տարբեր սոցիալական խմբերի երեխաներ՝ <ul style="list-style-type: none"> ➢ խնամատար ընտանիքներում ապրող՝ 2 սովորող, ➢ ծնողազուրկ՝ 4 սովորող, ➢ սոցիալապես անապահով, նպաստառու՝ սովորողների մոտ 50%-ը, ➢ բազմազավակ՝ 3 ընտանիք • Դպրոցի մանկավարժները արդիականացնում են իրենց գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում • Սոցիալապես անապահով, խնամատար ընտանիքներում ապրող, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների երեխաները օգտվում են դասագրքերի գումարի զեղչից • 2020թ-ի պատերազմից հետո դպրոց են հաճախել Արցախից տեղափոխված 4 սովորող, որոնց դպրոցական իրերով, գրենական պարագաներով ապահովելու համար աջակցել են դպրոցի մանկավարժական, աշակերտական, ծնողական կոլեկտիվները | |
|--|--|

Հաստատության ուսումնական միջավայրը

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցում ապահովված է աշխատակիցների և սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը: • Դասասենյակները լուսավոր են | <ul style="list-style-type: none"> • Դասասենյակները վերանորոգված չեն, գույքը հին է և կիսամաշ • Դպրոցում չկան առարկայական կաբինետներ՝ համապատասխան գույքով |
|---|---|

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը. • Դպրոցի ներսում և դպրոցից դուրս գործում են առողջ բարոյահոգեբանական հարաբերություններ | <ul style="list-style-type: none"> • SMART գրատախտակների բացակայություն |
|--|--|

Աշխատակազմի արժևորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն


| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դպրոցն օժանդակում է մանկավարժների պարբերաբար մասնակցությանը մասնագիտական աճն ապահովող սեմինարներին, վերապատրաստումներին՝ կազմակերպած ԿԶՆԱԿ-ի, ՀՄԿ-ի ,նախարարության կողմից երաշխավորված այլ կազմակերպությունների կողմից • Դպրոցը ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու կամավոր ատեստավորմանը՝ աշխատավարձի բարձրացման մոտիվացիայով • Դպրոցն ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու որակավորման տարակարգին (ունենք որակավորման տարակարգ ունեցող 5 ուսուցիչ) • Դպրոցը խրախուսում է այն ուսուցիչներին, ում աշակերտները հաջողություններ են ունենում առարկայական օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում (շնորհակալագիր) • Դպրոցը արժևորում է իր ուսուցչին ու նրա աշխատանքը՝ դրական խթան հանդիսանալով ուսուցչի | <ul style="list-style-type: none"> • Կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասիվություն • Ֆինանսական վիճակի սղություն՝ դպրոցի հաջողություններ ունեցող ուսուցիչներին դրամական խրախուսում տալու |
|--|---|


| | |
|---|--|
| <p>հեղինակության բարձրացման նաև ծնողների և սովորողների շրջանում</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի աշխատակիցները աջակցում են համայնքում կազմակերպվող միջոցառումներին՝ գյուղի օրվան նվիրված միջոցառմանը, գյուղում կազմակերպված Փամբակresourceֆեստ փառատոնին և այլն: Համայնքապետարանը գնահատում և արժևորում է նրանց աշխատանքը: | |
|---|--|

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

| | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներ • Դպրոցի ֆինանսները ձևավորվում են են ըստ <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգի>>, հին կարգ՝ 24 օգոստոսի 2006 թվականի N 1262-Ն հրաման, նոր կարգ՝ 22 սեպտեմբերի 2022 թվականի N 1481-Ն հրամանի https://www.arlis.am/documentview.aspx?docid=168828 • Դպրոցն իրականացնում է ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում՝ ըստ օրենսդրական պահանջների • Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարումը | <ul style="list-style-type: none"> • Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալ • Ֆինանսական սղության պատճառով նոր գույքի ձեռքբերման անհնարիություն • Արտաբյուջետային միջոցների բացակայություն • Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների բացակայություն |
|---|--|

- Դպրոցը պայմանագրեր ունի կնքած գրենական, տնտեսական, շինարարական, համակարգչային ծառայությունների մատուցման կազմակերպությունների հետ՝ ուսումնական նպատակով անհրաժեշտ նյութեր, պարագաներ ձեռքբերելու համար





Դպրոցի ֆինանսական ցուցանիշները, 2020-2023թթ.

5. Հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ ոլորտների

| <i>Ոլորտ</i> | <i>Հիմնախնդիր</i> |
|--|---|
| <p>➤ Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</p> | <ul style="list-style-type: none"> • Ժամանակակից կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական) ստեղծում • Նյութատեխնիկական բազայի համալրում նոր ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով, լաբորատոր գույքով |

| | |
|--|---|
| | |
| <p>➤ Կառավարման և խորհրդակցական մարմիններ</p> | <ul style="list-style-type: none"> • Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության ամրապնդում |
| <p>➤ Հաստատության համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի և շահառու կազմակերպությունների հետ</p> | <ul style="list-style-type: none"> • Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում |
| <p>➤ Մանկավարժական համակազմի</p> | <ul style="list-style-type: none"> • Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում • Կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի համար դիմողների ակտիվության խթանում |
| <p>➤ Աշակերտական համակազմ</p> | <ul style="list-style-type: none"> • Ուսման նկատմամբ մոտիվացիա • Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում |
| <p>➤ Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների նորարարությունները</p> | <ul style="list-style-type: none"> • Համակարգչային տեխնիկայի համալրում • Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում • Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում |
| <p>➤ Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ</p> | <ul style="list-style-type: none"> • Մարզային, հանրապետական առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում • ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում |

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Նոր չափորոշչին անցմամբ պայմանավորված որոշակի դժվարությունների հաղթահարում • Դասավանդման գործնական ուղղվածության ուժեղացում |
| ➤ Հաստատության ուսումնական միջավայրը | <ul style="list-style-type: none"> • Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի անլիարժեքության հաղթահարում |
| ➤ Ֆինանսատնտեսական գործունեությունը | <ul style="list-style-type: none"> • Ֆինանսական դժվարությունների հաղթահարում, դրամաշնորհային ծրագրերում ներգրավվում |

6.Նպատակների և խնդիրների սահմանումը

Մահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը, պատասխանատուները, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը

1. Ուղորտը՝ Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա

Նպատակ՝ Բարելավել դպրոցի շենքային պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը

Խնդիր՝ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի ստեղծում և հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով

| Մահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Ֆինանսական միջոցներն անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները | Ակնկալվող արդյունք |
|--|---|---------------|---|---|
| Դպրոցի երկրորդ մասնաշենքի կամ նոր դպրոցի կառուցում (կառավարության 2023թ-ի հուլիսի 6-ի նիստում հաստատվել է Բազումի կրթահամալիրի կառուցման նախագիծը) | Հիմնադիր, ԿԳՄՄՆ, լիազոր մարմին, տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2028 | Ֆինանսական միջոցներ՝ սուբվենցիոն ծրագիր, պետական բյուջե, նյութատեխնիկական պարագաները՝ շինարարական նյութեր և պարագաներ մարդկային ռեսուրս՝ շինարարական կազմակերպություններ | Ունենալ հրապուրիչ, հարմարավետ, ժամանակակից հազեցվածությամբ դպրոց կամ կրթահամալիր, որտեղ կրթությունը կիրականացվի արդի պահանջներին համապատասխան |

| | | | | |
|--|---|---|---|--|
| <p>Մինչև կրթահամալիրի կառուցումը դպրոցի ընթացիկ վերանորոգում, դասասենյակների համալրում նոր գույքով, համակարգչային կաբինետի համալրում նոր, ժամանակակից տեխնիկայով</p> | <p>Հիմնադիր, ԿԳՄՄՆ, լիազոր մարմին տնօրեն, վարչատնտեսական համակարգող</p> | <p>2023-2028</p> | <p>Ֆինանսական միջոցներ՝ դպրոցի բյուջե, հովանավորչական միջոցներ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ, նյութատեխնիկական պարագաները՝ աշակերտական սեղաններ, աթոռներ, համակարգիչներ, Սմարթ գրատախտակ մարդկային ռեսուրս՝ տնտեսվար, բանվոր</p> | <p>Ունենալ վերանորոգված, նյութատեխնիկական բազայով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցած դպրոց</p> |
| <p>Ռեսուրս-սենյակի ստեղծում և կահավորում</p> | <p>Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հոգեբան, ուսուցչի օգնական</p> | <p>2023-2025</p> | <p>Ֆինանսական միջոցներ՝ դպրոցի բյուջե, հովանավորչական միջոցներ, նյութատեխնիկական պարագաները՝ դիդակտիկ պարագաներ, մեթոդական գրքեր, գույք մարդկային ռեսուրս՝ տնտեսվար, բանվոր</p> | <p>Ունենալ ԿԱՊԿՈւ սովորողների ինտեգրում և ապահովել որակյալ կրթության</p> |
